

ՆՈՐԱՐԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՐԻ



Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարեկանը 6 րուբլի.
Աւանդին համարները 5 կօպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեք. Կապուչի. Тифлисе, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Melik».
Տէլէգր. № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօտեան օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցւում.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանիւր տողատեղին 10 կօպէկով.
Տէլէգր. № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՌԵՒ

ԲԱՆԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ

Կրեդիտ ժողովրդի համար.—Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Գաւառական գործիչի յիշատակին.
Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Բոլշակովսկի և Սերբիան. Արաքսի
լուրեր.—ՀԵՆՈՒՄԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐ.—ԲԱՆԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ.—Ճանապարհից

ԿՐԵԴԻՏ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Առաջիկայ 1904 թվականի նախահաշիւի
մէջ կառավարութիւնը մտնում է երկու
միլիոն րուբլի գումար այն նպատակով,
որ այդ գումարի օգնականութեամբ բացվեն
մանր փոխառու գրամարկի պետու-
թեան գանաղան մասերում: Մօտ 2 1/2
միլիոն րուբլի գումար էլ գոյութիւն ունի
իրեն մնացորդ այն նպատակներից, որոնք
տրված էին անբերրութիւնից ֆինանսած
գիւղացիներին: Ուրեմն ընդամենը մօտ
4 1/2 միլիոն րուբլի գումար յատկացվում
է մանր կրեդիտի կազմակերպութեան ա-
ռաջին փորձերի համար, որոնց տպագ-
րում կը հետեւեն նոր գումարներ՝ սկսած
գործը ընդարձակելու և զարգացնելու
համար:

Այն, ինչ որ այժմ ծրագրված է մանր
կրեդիտի կազմակերպութեան համար, մեծ
տարբերութիւն ունի պետական նախկին
կարգադրութիւններից նոյն առարկայի
վերաբերութեամբ: Եւ ահա ինչու: Եւ
տարբերութիւնը: Առաջ կառավարութիւ-
նը ներդրածական զէր էր ընդունում իր
մէջ և թողել էր ամբողջ գործը զարգա-
ցումը ազգայնականութեան վրա: Կառավա-
րութիւնը մշակել էր կանոնադրութիւն-
ներ և խոստացել էր որոշ արտօնութիւն-
ներ և դիւրութիւններ գրամարկի հիմ-
նողների համար: Իսկ այժմ կառավարու-
թիւնը եկել է այն եզրակացութեան, որ
նա ինքը պէտք է կազմակերպողի և նա-
խաձեռնողի զէր կատարէ երկրի զանա-
զան մասերում: Ուստի նա ծրագրել է,
որ իւրաքանչիւր նահանգում պէտք է
գոյութիւն ունենան յատուկ կոմիտեաներ,
որոնց գործը և նպատակը պէտք է լինի
մի կողմից տարածել մանր կրեդիտի հիմ-
նարկութիւններ բանալու գաղափարը ազ-
գայնականութեան զանազան լայնքի մէջ,
իսկ միւս կողմից թէ օգնել ցանկացողնե-
րին կազմակերպելու գրամարկի և թէ
դիւրացնել նրանց համար պետական նը-
պատ օտանալը կրեդիտային նորակազմ

ԲԱՆԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ

ՃԱՆԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ

III

Ա. Լ. Ե. Ք. Ս. Ա. Ն. Դ. Ր. Օ. Ղ. Ը.

(Շարունակութիւն)

Առանց չափազանցութեան մէջ ընկնելու կա-
րելի է ասել, որ մեր գաւառական աշխար-
հում քաղաքային ինքնակառավարութիւնը Ալեք-
սանդրօպօլում ցոյց տուցեք իր զբաղման,
համակերպի կողմերը: Կան քաղաքներ, ուր
ինքնակառավարութիւնը ծանր լուծ է համարվում:
Իրանը իրանց կառավարել չիմացող մարդիկ
կարծում են, թէ չարիքը իրանց անընդունա-
կութիւնը չէ, այլ առհասարակ ինքնակառա-
րութիւնը, որից և պէտք է ազատվել: Այսպէս է,
օրինակ, Շուշին: Ալեքսանդրօպօլում հասեա-
ցել են, որ ինքնակառավարութիւնը բարիք է: Կարծ
միջոցում այդ երկուստեք հիմնարկութիւնը
մի շարք գործեր է կատարել, որոնցով կարող
է պարծենալ: Նա բացել է առևտրական միջ-
նակարգ գործը, որ մեծ բարիք է ամբողջ Շի-
րակի համար, քաղաքային գրադարան, ժողո-
վրդական տուն՝ դաստիարակութիւնների և ներ-

հիմնարկութիւնները հաստատ հողի վրա
գնելու համար:

Պիւնտիսների միջխորին վազորութիւն
է արված, որ նա առաջիկայ աշնան մշա-
կէ կրեդիտային կազմակերպութեան ամ-
բողջ կանոնադրութիւնը և նրան, սկսած
1904 թվականի սկզբից, գործադրութեան
մէջ դնելու:

Մանր կրեդիտի պահանջը շատ մեծ է
և նա շատ շուտ կը զարգանայ, եթէ ա-
րդ պայմաններ արվեն: Եթէ այժմիկ ֆի-
նանսների միջխորութեան այդ հարցը
այս անգամ բաւարար լուծելու, մեծ դիւ-
րութիւններ արված կը լինեն գաւառական
անտեսական զարգացման համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

ԳԱՆԱԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ
(Նամակ Ախալքալաքից)

Տաճուրթ տարի օրանից առաջ, 1885 թվ-
ապրիլի 27-ին, Ախալքալաքում վախճանվեց, 27
տարեկան ծաղիկ հասակում, Ստեփան քահա-
նայ Դեմիրճոզլուան և թաղվեց հասարակական
հաշիւով. երկու սեռի հասարակութեան կողմից
գրված էին վեց պատկեր. յատկապէս թաղ-
ման համար Ախալքալաքից եկած Ստեփան Ստե-
փանէն դրուստապետ արտաքին աշտատանից,
մի քանի երիտասարդներ ճառեր կարդացին
և այն Եւ այդ արտաքին հասարակական
ցոյցներին նա արժանացել իր կարճատև, բայց
արդիւնաւոր գործունէութիւնով, որի հետ այ-
սօր աւելորդ չէր համարում մի քանի փոքր
ժամօթացնելու ՎՃԱԿԻՆ ՆԵՐԿԱՅ ԸՆԹԵՐՈՂՆԵ-
րին՝ նրա մահաճանը բանալու առիթով:

Ստեփան քահանայ Դեմիրճոզլուան աւարտելով
Ներսիսեան դպրոցի դասնիստը և մի երկու
տարի ուսումը շարունակելով Պետերբուրգի
ուսուցչական ինստիտուտում: 20-ամեայ ծա-
ղիկ հասակում քահանայ է ձեռնադրվում իր
հայրենի Ախալքալաքի համար և իբրև դար-
գացած, իրաւաւոր և կրակոտ ու վառվռուն
երիտասարդ՝ ոգևորված և համոզված գործիչի
կոչում գրաւով իր մէջ իր հոգեկան և բարո-
յական ուժերի ամբողջ թափով նետվում է
հասարակական գործունէութեան փշուռ ա-
պարէզը: Եւ չէ նայած կենքի անողոր հա-
րուածներին և ձախորդութիւններին՝ նրա
բարձր արամադրված հոգին երբեք կոմպրո-
միսս, սակարկութիւն չէ իմացել հասարակա-
կան ապարէզում, և զա զոր ամենամեծ ար-
ժանատիութիւնն է, իբրև գործիչ:

Կայացուցաների համար. փողոցներում երևում
է կատարելագործված կերտակային լուսաւո-
րութիւն. գրված են մի քանի հատ ՎՃԱԿԻՆ
տուն անուանված օխտանի լապտերներ, և
այդ այն ժամանակ, երբ Թիֆլիսը գլուխ է
կոտրում, թէ ինչպէս լուսաւորէ իր խաւար
փողոցները և նոյնպէս մի քանի հատ ունի յի-
շակ լապտերներից: Գաղաքային փողոցի այ-
գին պահվում է մեծ խնամքով:

Թող շատ լինեն այդպիսի գործեր, և քաղաքը
կը բարեկարգվի, կը դառնայ օրինակելի: Ա-
լեքսանդրօպօլը հիանալի գով կլինայ ունի և
մանաւանդ հիւանալի լուր. նա կարող է լուս-
ամարանոց դառնալ, եթէ գրաւի համագործակ-
ներ շատ ունենայ: Գրաւիչ չէ այն թանձր փո-
շին, որ համարեա ամեն օր մլում է Ալեք-
սանդրօպօլի փողոցներում: Պէտք է ասել, որ
Երիտալի լեռնադաշտը առհասարակ քամոտ եր-
կիր է. համարեա օր չէ անցնում առանց քա-
մու: Ալեքսանդրօպօլը զրկված չէ փոշու զէմ
կուելու միջոցից. նա իր մէջ շատ ջրեր ունի:

Ջրառատ քաղաքում շատ ճշող և վատե-
տեցուցիչ տպաւորութիւն է թողնում բուսա-
կանութեան բացակայութիւնը: Լոկ մի նախա-
պաշարմունք է, թէ Երիտալը անփայտ է ստեղծ-
ված և պիտի այդպէս էլ մնայ: Այդ նախապա-
շարմունքը վաղուց են ցնդել իրանը, այնքանա-
րօպօլները իրանց Ձէրէզի Զորով: Այսպէս

Համարեա միշտ և ամեն տեղ գաւառական
գործիչին վիճակված է լինում իր՝ առանց այն
էլ շատ համեստ՝ ուժերը բաժան-բաժան անե-
լու: Դեմիրճոզլուանը եւ ստիպված է եղել այն
կամ այն գործին նուիրելու իր ուժերի մի
մասը, բայց, ընդհանրապէս, նրա խիստ պա-
շարմունքն ու համակերպի գործունէութիւնը
կարելի է բաժանել քահանայական—քարոզ-
չական, գրական, մանկավարժական և հաս-
րակական գործունէութեան. և բոլոր առաջա-
րկներում նրա գործունէութիւնը միշտ կրել
է նոյն անփոփոխ ժողովրդական ոգին:

Իբրև քահանայ՝ նա ըստ Պատաղնիսի՝ հիւս-
կական ծառայութեան մէջ էր. նա իր զգաց-
ված և տաքանդաւոր քարոզներով մի ոգևոր-
ված մարդարէ էր իր ժողովրդի համար: Կամ
մտաւորում, նշտարում էր հասարակական ա-
րարներն ու վէրքերը, կամ ուսուցանում էր՝
ժամանակակից թարմ գաղափարներ արծար-
ծելով, այնքան թարմ, որ՝ նախանձից կուրա-
ցած՝ նրա թշնամիները սկսեցին նրան մեղա-
դրել բողոքականութեան մէջ, ճիշդ այնպէս,
ինչպէս շատ անգամ մեղադրվել են մեր մեծ
ուսուցիչները... Բայց ժողովուրդը եկեղեցուց
դուրս էր գալիս ոգևորված, միսթարված կամ
մի քան սովորած:

Ինչ վերաբերվում է նրա գրական համեստ
գործունէութեանը, հանգուցեալը թղթակցել է
ՎՃԱԿԻՆ, որով արժանացել է ՎՃԱԿԻՆ և
Հայկունու առաջիններին. նոյն իսկ հոգեկաւոր
ՎՃԱԿԻՆ ԽՈՐԱՆՈՒՄ ԽՈՐԱՆՈՒՄ ԽՈՐԱՆՈՒՄ
մէջ, և գրել է քահանայութիւններ, որոնցից
միայն մի քանիսն են տպագրված ՎՃԱԿԻՆ
Գ. ուս. անտրագրութիւնով, իսկ մեծ մասը
անտպագր են: Դրանք թէ՛ քաղաքականական
բարձր արժանատիութիւններ չունեն, բայց
համակերպի են իրանց տեսնեցնելու և բովան-
դակութեամբ:

Ապա չէ կարելի չը յիշատակել հանգուցեալ
գործիչի մի երկու բնօրինակ, որոնք ամբողջ-
ովին վերաբերվում են Ախալքալաքի խորհու-
րանի կեղծ անունով, 1882 թ., նա հրատա-
րակեց ՎՃԱԿԻՆ ԽՈՐԱՆՈՒՄ ԽՈՐԱՆՈՒՄ
իրարանցում գրեց ժողովրդի մէջ և գինեց իր
դէմ ազգայական դատակարար: Այն այսպէս
արիւնքար մաքառում էր հանգուցեալը խաւար
տարրերի դէմ՝ չը նայած իր զնտանեկան և
նիւթական անաղող ու վատ պայմաններին,
թշնամիների հաւաքածոներին և իր կուրծքը
մաշող թոքայտին...

Հանգուցեալը այստեղի նախկին հայոց հո-
գեւոր գաղութներում ուսուցիչ և տեսչի պաշ-
տօններում եղել է ոչ թէ չոր ս. ցամաք ման-
կավարժ, այլ միշտ ոգևորված, ներշնչող, քարո-
չ և կոպիւմ այն ծառայութիւն, գեղեցիկ ձորը, որ
բերդի ստորոտում է գտնվում. բազմաթիւ
աղբիւրներ կան այնտեղ, որոնք աճեցնում են
մի շաղկապ բուսականութիւն: Մահերը անկված
են վաղուց, այն իսկ ժողովրդի ձեռքով, որ իր
աների առջև, իր բակերում ծառ չունի: Ձէր-
էզի Զորը պատկանում է գինեւորական վա-
րութեան և գլխավորապէս գինեւորականների
համար է, որ այնտեղ պահվում է բուժէտ:
Բայց քաղաքացիներն էլ իրաւունք ունեն զբոս-
նելու, նոյն իսկ խնայեցնել էլ են կազմում
մեծ ծառերի տակ:

Մտերմ, ուրեմն, կարելի է ունենալ, և եթէ
չը կան, պատճառը ժողովրդի ծուլութիւնն է
եղել: Սակայն պիտի աւելացնեմ, որ ժամա-
նակը ոտնակոխ է անում ամեն տեսակ նախա-
պաշարմունք. ներկայումս քաղաքի մէջ էլ
բարձրանում են ծառեր: Դեռ քիչ են դրանք
չին կարողանում փոխել քաղաքի քնդհանրա-
պէս տխուր տեսքը: Պէտք է կրկնապատկել
եռանդը, պէտք է մանաւանդ չոր ու ցամաք
փշուռ փողոցները վայելալից ծառատունկե-
րով և ջուր անցկացնելով:

Ալեքսանդրօպօլի հայոց եկեղեցիներից եւ
միայն մէկը այցելեցի, ամենամեծը, որ կոչ-
վում է Ամենափրկիչ: Նա ինչ համար հետա-
քարակալ էր մանաւանդ այն պատճառով, որ
ներկայացնում է Անիի մայր եկեղեցու նմա-

դող... Այդ պայտաններում նա որոշ պարտա-
կանութիւններ կատարել է նոյն իսկ ձրի՝ չը
նայած իր քայքայված անտեսական դրութեան:
Անիի մեծ է նրա ծառայութիւնը՝ ներկա-
յումս փակված դրութիւնում գտնվող գրադա-
րան-ընթերցարանի օգտին, որի հիմնադիր-ան-
գամների ժողովների նախագահն է եղել նա մի
ժամանակ: Նրա նախորդ նախագահը նոյն իսկ
հարց էր դրել գրադարան-ընթերցարանը փա-
կելու՝ միջոցների սուղ լինելու պատճառով:

Սակայն Ստ. քահանայ Դեմիրճոզլուան ոչ միայն
փակվելու վտանգից ազատեց այդ հիմնարկու-
թիւնը, այլ հարկաւոր գրամը հաւաքելով ժո-
ղովրդից՝ նոյն իսկ սեփական շինութիւն կա-
ռուցեց գրադարան-ընթերցարանի համար, ե-
կեղեցապատկան հողի վրա: Բացի գրամական
առատ նուէրներ հաւաքելուց՝ հանգուցեալը
յորդոջներով տեղական արհեստագործները ձրի
են աշխատել այդ շինութեան վրա: Հանգու-
ցեալի հասարակական գործունէութեան թուով
չենք կարող չը յիշել նաև նրա թատերաերա-
կան գործունէութիւնը: Ձը նայած իր քահա-
նայական առտիւններին՝ հանգուցեալը միշտ դե-
կավարել է զանազան հասարակական-գաղո-
ցական հանգէներ և թատրոնական ներկայա-
ցումներ, իբրև բեմաւոր, սցենարիստ կամ
յուշարար:

Այն այդ վաղաժամ գործիչի մահաճանի բա-
ցումն էր, որ կատարվեց Վաղարշապատի օրը:

Հանգուցեալի մահվանից մի քիչ յետոյ՝ նրա
ընկերների, բարեկամների և յարգողների շը-
ջանում միտք է ծագում հանգանակած գումա-
րով, յարգողների կողմից, մահաճանի գնել
հանգուցեալի գերեզմանի վրա: Այդ ժամանակ
ստորագրութիւն է բացվում և մօտ 60—70 ր,
է ժողովում, որից մի մասը մնում է հան-
գուցեալի եղբայր՝ Մ. Դեմիրճոզլուանի մօտ և
ապա նրա մահով կորչում է, իսկ միւս մասը
ձեռքից ձեռք անցնելով՝ գալիս հասնում է զը-
րադարան-ընթերցարանի վարչութեան ձեռք:
Վերջապէս, հանգուցեալի ընկեր պ. Տ. Տօնա-
կանեան և նախկին աշակերտ պ. Վ. Շահապո-
սեան գործի գլուխ են անցնում, հանգանակու-
թիւնը շարունակում և տեղական միջոցներով
գլուխ բերում համեստ արձանը, որով կատար-
վում է շարունակ 18 տարի արտաքաղաքացի-
ների խղճի վրա ծանրացած պարտքը:

Այդ առիթով, յուլիսի 13-ին, հանգուցեալի
յիշատակին պատարագ և հոգեհանգիստ տեղի
ունեցաւ: Թէ պատարագի ժամանակ և թէ գե-
րեզմանի վրա կատարված հոգեհանգիստ եր-
գում էր երկու տեղի քահանայ խումբը՝ պ. Տ.
Տօնականեանի ղեկավարութեամբ: Պատարագի
ժամանակ նորոնայ Համազասպ քահ. Տէր-

նութիւնը: Մեծ, բարձր, զեղեցիկ եկեղեցի է.
Թիֆլիսը իր 50—60 հազար հայ ազգաբնակու-
թեամբ չունի և ոչ մի բան, որ յիշեցնէր այդ
ընդարձակ տաճարը: Բայց Ալեքսանդրօպօլի Ա-
մենափրկիչը մեծ ճարտարապետական գործ հա-
մարելու համար չը պէտք է տեսած լինել
Անիի մայր եկեղեցին: Երբ մահաբերում
է, իսկոյն աչքիդ առջև պատկերանում է սե-
րունդների տարբերութիւնը: Ինչ համաժառու-
թիւն բուն եկեղեցու և պատճենի մէջ: Անիի
մայր եկեղեցին յափշտակում է իր գեղարուես-
տական ծայրայեղ նրբութեամբ, որ միացած է
յանդուգն, մեծազոր մտքի թռչունների հետ:
Այստեղ այդպիսի տպաւորութիւն չը կայ. քա-
րեր են դարձված իրար վրա, ընդօրինակող
ձեռքը կողմից է եղել, չէ կարողացել հազոր-
դել իր գործին այն օգտին, թէթ, բարակ
կերտածքի բնաւորութիւնը, որով տողոված
է Անիի կաթողիկէի իւրաքանչիւր կամարը,
իւրաքանչիւր քարը:

Սերունդների տարբերութիւն... Դուք կարող
էք ասել, թէ Անիի մայր եկեղեցին կառուցել է
Տրդատ ճարտարապետը, որի շինարարական
հանձնարը անուանալի է, իսկ հանձնարներ ամեն
ժամանակ չեն ծնվում: Համաձայն եմ, բայց
այդ դէպքում թող Ամենափրկիչը գոնէ Անիի
միւս եկեղեցիներին կամ մերձակայ Մարմա-

Գրեգորիան՝ ընտանի առնելով հանգուցեալի
խօսքերը.—«մահ ուրաղացի, մահ դաւաճանի»
մի հակիրճ և բաւական ազդու քարոզ խօսք,
որ, մեր կարծիքով, նրա մինչև հիմա խօսած-
ներէից ամենից աշուղտ էր, որի համար կարելի
է շնորհաւորել նրան Պատարագից յետոյ՝ տե-
ղական ինտելիգենտ երիտասարդներից և տե-
լիկներից ու օրերդներից բաղկացած բազմա-
թիւ հասարակութիւն շտապեց հանգստարան,
որտեղ պէտք է հոգեհանգիստ կատարվէր մա-
հարանի վրա, որը այդ առիթով զարդարված
էր զարար ծաղիկներով, մահարձանի վրայից,
պատկի մէջ կախված էր նոյնպէս հանգուցեալի
պատկերը, Հոգեհանգստի ժամանակ ճառեր
կարդացին պ. պ. Վարդան Շահպարտեան, Խո-
րէն Մեծատունեան և ուսանող Գագիկ Պիճի-
կեան, հանգուցեալի հակառակորդ Ռշտունու
որդին։

Ապա պ. Տ. Տօնականեան, իբրև յանձնաժողովի
անդամ, մի քանի խօսքով տեղեկութիւններ
հաղորդեց մահարձանի կառուցման մասին
Վերջը հանգուցեալի այրին և ուսուցիչ-որդին,
որոնք հրաւիրված էին ներկայ լինելու հոգե-
սին, իրանց կողմից նախաձայն հրաւիրեցին
հանգուցեալի ներկայ գտնվող ընկերներին,
նախկին աշակերտներին և մի քանի այլ ինտե-
լիգենտ երիտասարդներին։

Ի դէպ. Ստ. քահանայ Դեմիրճոյեանի մի երկու
անձնական թշնամիները մինչև հիմա չէին կա-
րողանում հաշտվել հանգուցեալի գերեզմանի
հողաթմբի հետ. արդեօք կը հաշտվեն դէժ-
մասուհեան նրա մահարձանի լուսապատկեր կազ-
մող խաչի հետ, խաչի, որը նա իր չարատանջ
կեանքի ընթացքում էլ պատուով կրում էր իր
ուսերի վրա և որը, սակայն, զարդարում է
այնքան անարժան կրճերը...

Սայլիւսեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱԽԱԽԻԾ

Բանանց գիւղ, յուլիսի 24-ին
Նորերս վախճանվեց բանանցի նահապետ
Մուսուկ Մնացական ապէրը կարիւր ու ե-
րեքամեայ հասակում մի միջոց է նա 1801 թ.,
ապրել է ամբողջ 19-րդ դարը ու իր երկա-
րամեայ հասակում մի անգամ գտնէ չէ հիւան-
դացել. մեծու առանց անխորհրտ մահելու. մա-
հից մի ասան օր առաջ կողքից խօսելու ըն-
դունակութիւնը նա վարում էր շատ չափա-
ւոր կեանք. ոգեկիր խմիչները համարեալ չէր
գործ ածում. երեկոները ընտ. չէր ընթրում։

Հանգուցեալ Մնացական ապէրը յայտնի էր
մեր ու չընկալող գիւղերում Վուսուկնց հայ-
անունով. «հայ» բառը մի պատուաւոր կոչում
է, որը ապիւն է ժողովուրդը իր ծերունինե-
րից այնպիսիներին, որոնք իրանց կեանքով,
անարատ, առաքինի վարք ու բարքով ու գոր-
ծունէութեամբ յօգուտ գիւղի, ժողովուրդի ա-
ռանձնապէս աչքի են ընկել միշտ. գիւղ է
պատահում, ուր «հայ» տիտղոսը կրող ոչ ոք
չէ լինում, չը նայած, որ զառամեալ ծերու-
նիներ գտնվում են այնտեղ. Տասնեակ տարի-
ները ընթացքում հազիւ է այդ կոչումով յայտ-
նի մինը, երկուսը գտնվում գիւղում. Այդպի-
սին վայելում է ժողովուրդի առանձին յարգան-
քը. նրան լուծւ են, նրանից քաջվում ու ա-
նուշան են, թէ փոքրերը և թէ մեծերը Այդ-

պիտի «հայը» գիւղի մեծը, գիւղի նահապետն
է. նրան բոլորն էլ ապէր կամ պապ են ա-
սում. բոլորն էլ յարգանքով լուծւ են նրա
խրատները, նկատողութիւնները ու լուծ տա-
նում նրա կշտամանքը. գիւղի նահապետի
«քէֆին» դիպչելը, նրան «ջողաք տալը», հա-
կաճառելը միշտ է համարվում։

Մուսուկ Մնացական ապէրը վերջին երե-
սուն տարվայ ընթացքում «հայ» կոչումը կրե-
լով եղել է իր գիւղի նահապետը, ընդհանրա-
կան ապէրը. Եթէ մէկը օտարութիւն է՝ գնա-
ցել, առանց նրան տեսնելու, նրանից խրատ
լսելու ու նրա օրհնութիւնը օտանալու. չէ՛ ճա-
նապարհվել գիւղից, եթէ օտարութիւնից պար-
զերես վերադարձել է, գնացել է Վուսուկնց
հային» տեսել, նրանից խրատիւ, օրհնութիւն
լսելու համար. Բանանցիցիներից շատերը օտա-
րութեան մէջ, ուսանողական նստաբանների
վրա կամ այլ պատասխանատու գործում, յա-
ճախակի յիշել են Մնացական տալը, նրա
սրամիտ գործունէութիւնը, նրա կծու, նրա ան-
խնայ լեզուն, նրա խրատները՝ նամուտով կե-
նալ, չը մոռանալ գիւղը ու աշխատել միշտ
լաւ գործերով բարձրացնել նրա անունը՝ աշ-
խատել են լաւ, եռանդով տանել իրանց գոր-
ծը, որպէս զի պարզեման վերադառնալու իրանց
գիւղը ու գիւղի նահապետից, Վուսուկնց
հայից, գովասանք, օրհնութիւն լսել, այլ ոչ
պարտաւոր ու նոյնը։

Ամեն տեղ, ուր երևում է Վուսուկնց հայը,
կուտակվում է ամբողջ ու լուծւ նրա խրատ-
ները. Սարի ու այգիների ճանապարհին, գիւղի
փողոցներում, իր հրապարակներում Մնացական
ապէրը հանգստութիւն չունէր. միշտ չըլա-
պտում էին նրան ունկնդիրները, խօսեցնում
ու լուծւ. նա քարոզում էր օգը, նամուտ, աշ-
խատաբերութիւն, ազնուութիւն, հայրաւորութիւն,
ամբօթխածութիւն, արուս, ճշմարտախոսու-
թիւն. ունէր օտը, կծու լեզու. սիրում էր
քննադատել, այն էլ շատ անխնայ, գիւղի կա-
ռավարիչների ու հոգեւորականութեան գործու-
նէութիւնը, արարքները. Գիւղի աստուալը,
դատաւորները, քահանաներն ու իշխանները
միշտ քաջվում, վախենում էին Վուսուկնց
հայից ու խոստովանում էին նրա հետ պատա-
հելուց. բայց երբ Մնացական ապր ճանկն էին
ընկնում, լուծ կանգնում էին նրա առաջին ու
առանց բողոքի ամառում նրա նկատողութիւն-
ներն ու դատաւիտութիւնները։

Մնացական ապէրը մինչև իր կեանքի վերջը
լարված յարաբերութիւններին մէջ էր գտնվում
գիւղի հոգեւորականութեան ու... Դաւիթ մար-
գարէի ու Պօղոս առաքեալի հետ. Հոգեւորա-
կանութիւնը ատում էր նա նրա շահաբերու-
թեան ու որդաւորութեան համար, Դաւիթ
մարգարէին այն պատճառով, որ նա 40 կին է
ունեցել ու վերջինս, 40-դին, ձեռք է բերել
նրա օրինաւոր ամուսնու սպանութեան միջո-
ցով. Պօղոս առաքեալին էլ ատում էր նրա հա-
մար, որ իր գրողներէից մէկն էր ասում է՝
«Տնուր, մի քննիր»։ Ենթադրւ այդ լարված յա-
րաբերութիւններին նա տարին հազիւ մի կամ
երկու անգամ էր եկեղեցի գնում, Չատկին ու
Ջորհնէքին, այն էլ միմիայն Գրիգորեան սի-
րելուց դրժված։

—Ինչու չես ժամ գնում, ապէր.—հարցնում
էին նրան։

—Գէշ են թուում։

—Ուղքեր։

—Տէրտէրները, մին էլ էն Դաւիթն ու Պօ-
ղոսը.—ասում էր Մնացական ապէրը.—«Եթէ
Գրիգորեան չը լինէր, ես իսկի ժամ էլ չէի գնալ.
միակ արդար, միակ ճշմարտը նա ա, նա.
ես Նրան մատաղ, Նրան. մնացած բոլորն էլ
մեղաւոր հողեղէններ են. մեղաց որդիք են,
մանաւանդ մեր Երեմիայի հաւան կացած
Դաւիթն ու Պօղոսը. էդ առաքեալ Պօղոսն ա-
սում ա՛ւ «տնուր, մի քննիր»։ Լաւ լսեցէք հա՛-
«տնուր մի քննիր»։ Լաւ բան կը գնայ, որ եկե-
ղեցին տանք տէրտէրներին ու չը քննենք, թէ
տեսնենք նրանց ոնց են քահանայութիւն ա-
նում. եթէ բոջ անենք, չը քննենք, նրանք ե-
կեղեցին իրանց համար դուքան-բաղար կը
դարձնեն. կամ բան կը գնայ, որ գիւղը տանք
տանուտէրին ու իշխաններին ու չը քննենք,
թէ տեսնենք նրանք ոնց են կառավարում մեզ.
Եթէ նրանք բոջ անենք, գայլերի նման գիւղը
վէր կը կոխեն ու կուտեն. չէ, թէ Ե Պօղոսն
առաքել ա, բայց ես նրա հետ համաձայն չեմ,
էդ բանը նա ծուռ ա տեսը։

Մնացական ապրը թաղեցին գիւղի մօտ
գտնվող «Տաթի-տեռ» անուն կրող լեռան գա-
գաթին, այն համարվում. որ նա այն բարձ-
րութիւնից կը պահպանէ գիւղը, բարեխոս
կը լինի գիւղի համար Աստուծու առաջ, և
նա, յարգելով գիւղի նահապետի յաւիտենա-
կան աղերսը, միշտ կը դարձնէ գիւղից ու
ժողովուրդից իր ցաւումը, կարկուտն ու երաշ-
խ, մուկն ու մորեխը...

Թաղման հետեւալ օրը զուգահեռ-զաւաղով
այցելութեան գնացին Մնացական ապր գե-
րեզմանին, որի շուրջ մի քանի ժամ անընդ-
հատ տեղի ունեցան պարեր. ըստ հնաւանդ
սովորութեան այդպիսով անվում էր գիւղի
նահապետի, նրա յաւիտենական բարեխոսի,
փառաւոր մուտքը երկնային արքայութիւնը...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԽՄԱՆԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 25-ին
Թէ՛ որ աստիճանի անհոգութեան և անփու-
թութեան են մատնված մեր հինաւուրց աւե-
րակները, աներակալայի է. Եթէ նոյն իսկ ի
նկատել չառնենք նրանց մեր անցեալում ունե-
ցած նշանակութիւնը, որը շատ մեծ է եղել,
հէջ ներկայումս նրանք մեծ նշանակութիւն
ունեն մեզ համար, մեր անցեալը, մեր ազգի
ճաշակը և ճարտարապետութիւնը ուսումնասի-
րելու համար. Գաղաքակիրթ երկիրներում ա-
մեն մի քաղ կամ չէ՛նք բնկոր, որ հնութեան
կնիք է կրում, պահվում է ամենայն իմաստով.
անազին ծախքեր են անում նրանց ընտելեան
և մարդկանց աւելումներից ազատ պահելու։

Թէ՛ որքան անընդունակ ենք մենք նոյն կերպ
վարվելու, կը նկատէ ամեն մի ճանապարհորդ,
որը չըլում է մեր աւերակները դիտելու Եթէ
ընտելեան դէմ նրանց պաշտպանելու շնորհ
ու ոյժը չունենք, գտնէ կարող ենք մարդկանց
վանդալութիւնից ազատ պահել. նախնի փա-
ռաւոր տաճարների քարերով գիւղացին իր
գոմի պատն է յարում. նրա ձեռքերը չեն դո-
ղում իր նախնիների արձագանքներ, որոնց հա-
մար արեւն և զրախք է թափված, քանդելիս,
աւերելիս։

Այս բոլորը դեռ ոչինչ. վերջին ժամանակ-
ներում պատահում են մարդիկ, որոնք չափա-
դիտական և այլ դիտաւորութեամբ փորում,

քանդում են մեր նախնիների յիշմները
Եթէ այդ գիտական նպատակով լինի, գտնէ
կարելի կը լինի մի կերպ արդարացներ. Գե-
րեզմաններից դուրս եկած հնութիւնների ինչ
և որ լինելը պէտք է յայտնի լինի հասարա-
կութեան. Թողնելով բոլորը, մի քանի նշանա-
ւոր օրինակներ միայն բերեմ.—ինչ են եղել
Ամաղու վանքում (Դարպաղեղեղում) թաղված
Սմբատ Բագաւորի գերեզմանից հանած դէն-
քերն ու զարդերը. Այդ գերեզմանը քանդել է
մի հայ բժիշկ, իսկ թէ իրերը ինչ է արել
յայտնի չէ։

Բագաւորանեաց Թագաւորներից մէկի գե-
րեզմանն է միայն մեզ յայտնի, որը գտնվում
է Ղոչավանքի (Հոտովանք) գտնված ձորում.
Անչափ էր գայլոյթ, երբ ճանապարհոր-
դութեանս ժամանակ, այդտեղով անցնե-
լիս նկատեցի, որ գերեզմանը քանդված
է. Գաղաղանքի վարպետութեամբ հանել են
ցածի քարերից մէկը և գետինը փո-
րելով, գիշեր ժամանակ գողացել գնահատելի
զարդեր և իրերը և անցքը նորից ծածկել.
Այս մասին հարցրի Ղոչավանքի վանահօրհիւ
նա պատմեց, որ քանդողը գիւղի քահանայն
էր եղբոր և մի քանի օգնականների հետ, և
թէ ինքը բողոքել է հոգեւոր կառավարութեան,
բայց այդ բողոքներն ապարդիւն են անցել.
Քանի որ յարողը գալով այս գործը քննելու
ինչ ինչ ազդեցիկ պատճառներով գործին մա-
տերի արանքով է նայել և թողել հեռացել.
Հարցնում ենք.—ինչպէս են համարձակվել
քանդել այդ գերեզմանը, ինչ իրաւունքով են
այդ արել, ուր են հանված զարդերը և ինչ-
պէս է, որ անպատիժ են մնում նոյն և նման
մարդիկ. Չէ՛ այս օրապարտութիւն, բացար-
ձակ վանդալութիւն և խաղաղութիւն է.
Հրաւիրում ենք ուս հարկն է ուշադրութիւնը
նոյնանման դէպքերի առաջն առնելու և յոն-
ցաւորներին պատժելու համար։

Ս. Գեղամ.

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

«Նարեկ-Բուռ» լրագրի վերջին համարներից
մէկում ապագրված է Թիֆլիսի պարական
գլխաւոր հիւպատոս Նազիր-ու-Մուլլէի պաշ-
տօնական հաղորդագրութիւնը, որ ստացել է
նա պարական արտաքին գործերի մինիստ-
րից Հաղորդագրութեան մէջ ասված է, թէ
կառավարութեան ձեռք առած միջոցներով
Թաւրիզում ծագած անկարգութիւնները ճնշ-
ված են. Սուլայմիէ Հալի-Միրզա-Հասան, որը
պատասխանատուութեան էր ենթարկված ան-
կարգութիւնների պատճառով, ձերբակալվեց և
Թաւրիզից ուղարկվեց Թէհրան. Այն դէպքերը,
որոնք տեղի ունեցան Թաւրիզում, այժմ վա-
րացված են և ամենաշնչին հեռք անցած կա-
տարվածից այժմ չէ մնացել. Այժմ Թաւրիզում,
ինչպէս նաև պարական ուրիշ նահանգներում,
տիրում է կատարելալ խաղաղութիւն և հանգա-
տութիւն։

Հաղորդակցութեան ճանապարհների մի-
նիստը թոյլ տուեց կազմել Թիֆլիսում, առա-
ջիկայ օգոստոս ամսին, բոլոր առաւական եր-
կաթուղիների ճանապարհային ծառայութեան
գործիչների համաժողով. Աւելի քան 80 հար-
ցեր արդէն նախապատրաստված են և կը ներ-
կայացվեն համաժողովի ճշմութեան։

Երկրագործութեան և պետական կալուած-
ների մինիստրութիւնը հարց է բարձրացրել
կովկասեան պետական հողերի մէջ գտնվող

չէնին նմանի իրեր կերտածը. Ես ասում
եմ, որ սերունդների տարբերութիւնը առաջին
պատճառն է. Անկախած է, որ զարերով կրած
գերութիւնը մեզ շատ է հեռացրել մեր նախ-
նիքներից. Մի սարսիկ ժողովուրդ վայրենանալ
կարող է և ոչ թէ իր ազատ պապերից առաջ
ընկնել. Երբեք այս իրողութիւնը հաստատող
մի հակայական վկայ է. Ես դեռ առիթ կուենե-
նամ ցոյց տալու ձեզ սերունդների տարբերու-
թիւնը...

Երիտասարդ քաղաք անուանեցի ես Ալէք-
սանդրապոլ. Չեմ ուզում, որ այդ անունը նշա-
նակէ անփորձութիւն, թեթեւամտութիւն. Ընդ-
հակառակն, Ալէքսանդրապոլի մէջ են նկատում
եմ մասաւոր աշխոյժ, գործելու բարի ճգնու-
ներ. Պարտաւոր եմ համարում յիշատակել, որ
այստեղ կամ մի քանի տարիներ, որոնք
հայերէն գրքեր են ապագում. Մեր ոչ մի
գաւառական քաղաք, կարծես և ոչ մեծահոգի
Բագուն, վերջին տարիներս այնքան հայերէն
տպագրութիւններ չեն տուել, ինչքան Ալէք-
սանդրապոլը. Ես չեմ կարող մի բարձր կարծիք
յայտնել այդ հրատարակութիւնների գրական
արժանաւորութիւնների մասին. Ալէքսանդրա-
պոլում ես ձեռք բերի «Ուղեցոյց Անի քաղաքի
աւերակաց գրքովը, կարծելով թէ նա կօգնէ
ինձ ճանապարհորդութեան ժամանակ. բայց
երկու երես կարդալով, իմացայ որ նրա

հեղինակը կատարելապէս անհասկանալի է
և միամիտ, ինչպէս երեխայ. Ալէքսանդ-
րապոլից էին դուրս գալիս և այն օրա-
ցոյցները, որոնց մէջ ծանր ու բարակ դատա-
ղութիւններ էին լինում, թէ գիշերվայ որ ժա-
մին տեսած ստանդներն են չար կամ բարի կա-
տարում ստանում. Այս բոլորը ես գիտեմ,
բայց այս բոլորը չէ կարող մոռանել տալ
փաստը.—ալէքսանդրապոլից գրաւորութեան
փաստը. Եւ միշտ թոյլ կամ վատ չէին այն
գործերը, որոնք տպվում են այստեղ. Լինում
են և օգտաւոր հրատարակութիւններ. օրինակի
համար ես կը յիշեմ անդադի մի ուսուցչի
կազմած Վայրենի Լեզուն, որ, ինչպէս լսել
եմ մեր մանկավարժներից, արժանի է ընդու-
նելութեան. այստեղ է տպված և «Ուղեգրական
Միտուն»-ը. հետաքրքրական երգարանը, որի
մէջ հաւաքված են ներկայումս այնքան տա-
րածված ժողովրդական բազմաթիւ երգեր։

Տպարանը.—սա վաղուց նկատված փաստ է—
ծնեցնում է պահանջ. Ալէքսանդրապոլիցն աշ-
խատում է լաւ գործադրութիւն տալ մասնա-
լին. Այստեղ նոյն իսկ թերթ է հրատարակ-
վում, բայց դժբախտաբար, միմիայն յայտարա-
րութիւններ տպելու իրաւունք ունի. Պատմեմ
և մի իրողութիւն. Ալէքսանդրապոլում մի վէճ
է ծագել. «Աստուածածին եկեղեցու և հոգեւոր
վարչութեան մէջ. վէճի առարկան մի կտոր

գետին է. Փոքրիկ հարց է, տեղական նեղ նշա-
նակութիւն ունեցող. Բայց Ալէքսանդրապոլում
այդ առիթով հրատարակվեց մի բրօշուր, որ
ուզում էր ապացուցանել թէ ուս օտարականու-
թիւնը պիտի համարվի գետինը։
Ճշտումներ կան. կարեւոր այս սէրն է,
զգացովոր պահանջը. Թող նա յարաւան է ժա-
մանակով, երբ Ալէքսանդրապոլի մէջ կը բազ-
մանան կրթված, ինտելիգենտ մարդիկ, գոցե-
այդ սէրը աչքի ընկնող ծառայութիւններ կը
մատուցանէ մեր գաւառական գրականութեան,
ուր թէ և չը կայ այսօր, թոյլ ու աննշան է,
բայց գրաւ պիտի լինի, պիտի իր կարեւոր
դիրքը գրաւէ վերջապէս։

Վերում ես յիշեցի ժողովրդական երգերը
և չեմ կարող չաւելացնել, որ այդ երգերի վե-
րաբերմամբ էլ Ալէքսանդրապոլը երախտագի-
տութեան արժանի դեր է կատարում. Այստեղ
են հաւաքվում ժողովրդական եղանակները.
յայտնի են այստեղի աշուղները, սրանք
ժողովրդական եղանակները գործածական են
դարձնում, երգեր են հեղինակում կամ թարգ-
մանում, նմանողութիւններ են սարքում.
Մեր ժողովրդական երգերի մեծ մասը այս-
տեղից է տարածվում ուրիշ տեղեր.
Ալէքսանդրապոլիցն աշուղ է, Ալէքսանդրապոլ
նիւր սատակներ ենթարկված են ժողովրդական

բանաստեղծութեան ձեռն, նոյն իսկ ունեին,
աշխատում են աշուղ լինել...

Կարծեմ ամենքի համար նկատելի մի հան-
գամանք է, որ արեւմեան հայութիւնը աւելի
է աչքի ընկնում իր կրօնական շնորհանգի-
թեամբ, աւելի ազգային գգացմանը ունի. Այդ
յատկութիւնը մինչև այժմ էլ պահում են գաղ-
թական թիւրքաշայերը. Ալէքսանդրապոլը չը-
ղապառված է հոչակաւոր հնութիւններով և
ալէքսանդրապոլիցն, պէտք է ասել, սիրով և
յարգանքով է վերաբերվում հնութեան բեկոր-
ներին. Անին մի ուսուցիչի հետ անգիւր-
պօլցու համար Ձը գիտեմ, շատ կը լինեն տի-
պիկ ալէքսանդրապոլիցներ, որոնք տեսած չը
լինեն Բագաւորանեաց հրաշալի մայրաքաղաքը.
Մինչև Անի 45—48 վերստ ճանապարհ է հա-
մարվում. Բայց գնում են ոչ միայն մեծերը,
այլ և փոքրերը. Գնում էին դեռ այն ժամա-
նակ, երբ Անի թիւրքաց հող էր. Այժմ հօ-
գրի ճամբա է դարձել այդ տարածութիւնը.
Տարաբախտաբար, ես ոչինչ չը պիտի կարո-
ղանամ հաղորդել ընթերցողիս տեղացի հայ-
կաթուղիների մասին, որովհետեւ ժամանակ և
միջոց չունեցայ ծանօթանալու նրանց հետ.
Թէ՛ս ստաւիկ ցանկանում էի։

Լէ.

